բեանց, եթէ ոչ միայնակ տալով պարգև իբր Օտարաց, այլ եթէ լրբեցեալն յիշատակեսցի 'ի կտակս իւր յայտնելով անօրէնութեամբ ծնեալս իբրև ժառանգորդ իւր զոր ինչ 'ի նմայ տուեալ, անարժան տուրք համարեսցի, և մի՛ գոցի նաև Օրինօք ժառանգք կարեն արհամարհել, և զրկել նմայ 'ի այն նուիրանաց։

ԳԼՈՒԽ ՅԹ.

Կարգ վաճառելոյ երկիր եթէ 'ի մէջ քաղաքաց և 'ի յերեսս երկրի դաշտաց անուն Օրինաւոր վան վաճառելոյ երկիր, յիշեսցի յագարակ մի որ գոցի երկայնութեամբ 240 ուղուկ և լայնութեամբ 160 ուղուկ որում համապատասխանէ երկայնութեամբ 60 ոտնաչափ և լայնութեամբ 40 ոտնաչափ, սա՛ յիշեսցի 'ի միջի մեր յագարակ մի և ամենայն գնողն և վաճառող ըստ արժանեաց յերկրին խօսելով զին յագարակի միոյ, որում քանակութեամբ որ հաճեսցի կամաց գնողին և վաճառողի հաստատելով զին յագարակի միոյ և ապա չափեսցի երկիր որքան յագարակ որ իցէ հատուցանէ գնողն զին իւրաքանչ յագարակի և չափ լինիլ սորայ պարտ է այսպէս, որ ամենայն 38400 բազմացուցեալ ուղուկ համարեսցի մի յագարակ այսինքն.